Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 17-ի N 990 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու դիմումի հետ լիազոր մարմին ներկայացվող ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովման համար պահանջվող ֆինանսական երաշխիքի (այսուհետ՝ երաշխիք) բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու դիմումի հետ ներկայացվող երաշխիքը պետք է բավարարի հետևյալ չափորոշիչները՝

1) պրինցիպալը (դիմումատուն և (կամ) ընդերքօգտագործողը) պետք է ներկայացվի ֆինանսական երաշխիք, որը տրամադրվում է բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից.

2) երաշխիքի գումարի չափը պետք է համապատասխանի ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափին.

3) երաշխիքով նախատեսված պարտավորությունը պետք է լինի ինքնուրույն՝ դիմումատուի և (կամ) ընդերքօգտագործողի հիմնական պարտավորությունից անկախ.

4) երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից.

5) երաշխիքն ուժի մեջ է մտնում ոչ ուշ, քան ընդերքօգտագործման իրավունքը ստանալու օրը:

3. Երաշխիքի գումարի հաշվարկը կատարվում է դիմումատուի կամ ընդերքօգտագործողի կողմից՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների կազմման ժամանակ՝ դրանցում ամրագրված միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների համար կազմված նախահաշվի հիման վրա: Նախահաշվային արժեքների հաշվարկման համար պետք է հիմք հանդիսանան ընթացիկ շուկայական գները:

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անցկացման ընթացքում տալիս է երաշխիքին որակական գնահատական: Ներկայացվող երաշխիքին տրվող որակական գնահատականը համարվում է բավարար, եթե այն համապատասխանում է սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված չափանիշներին:

5. Երաշխիքը մերժվում է սույն կարգով սահմանված չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ